

THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆԱԿՆԵՐԸ ԲԱՑ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՆ:

ՄԱՐԿԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 18

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱԲԱԹ, ՄԱՐՏ 12, 1898

ԳԻՆ 3 ԱՆԹ

Բ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Սպանիայ և Միացեալ Նահանգներն—Հայկական բարենորոգումներն—Հայաստանի մը մահը—Ս. Պապին տարեդարձը—Ռուսն ու Թուրքը—Չինական խնդիր—Երիտասարդ այցելու մը:

Մէյն զբահուորի ծանօթ խնդիրը կը կարծուի որ խաղաղութեամբ պիտի կարգադրուի: Երկու կողմէն պատրաստութիւններն թէև կը շարունակուին սակաւին, բայց Լատինական առածը կ'արդարացնէ մեր կարծիքն: «Եթէ խաղաղութիւն կ'ուզես, պատերազմի պատրաստուէ՛»:

Շարժուս մէջ Սպանիայ Հինգ նոր մարտանաւեր գնեց Լոնտոնէն, և երկու հատ ևս գնելու համար սակարկութեան մէջ է այժմ: Միացեալ Նահանգաց կառավարութիւնն ալ նոր զբահուորներ ձեռք բերելու համար գործակալներ կարգած է յԵրոպայ: Սպանիայ երեք օր առաջ, Հավանայի Ամերիկեան Հիւպատոսին, Չորավար Լիի պաշտօնակ ըլլալը պահանջեց. բայց Ուաշինկթընի կառավարութիւնն կտրուկ պատասխանաւ մը մերժեց այդ պահանջը: Երկու օր առաջ Գոնկըրէսը 50 միլիոն տոլարի վարկ մը քրուէտիկ պատերազմական պատրաստութեան համար, ու երկու նոր գիննակի գնդեր աւելցուց բանակին վրայ: Կ'ըսուի թէ Անգղիա մտադիր է Միացեալ Նահանգաց հետ հասկացողութեան մը գալ այս օրերը դաշնակցութիւն մը կազմելու համար:

Պոլսոյ Անգղիական դեսպանն վերջերս պաշտօնագիր մը ներկայացուց Բ. Գրան, Հայաստանի մէջ տեղի ունենալիք բարենորոգմանց մասին: Դեսպանն այս պաշտօնագրով դիտել կուտայ թէ 1895ին ստորագրուած ծրարագիրն զեռ անգործաբեր է կը մնայ. և եթէ մի քանի տեղեր մասամբ գործադրուած ալ են, բայց արդիւնքը գոհացուցիչ չէ երբէք: Կուսակալաց Բրիտանոնայ օգնականներու պաշտօնին այնպիսի մարդիկ կոչուած են, որք Թուրք կառավարութեան հաճելի ըլլալու համար: Մահմէտականէ մ'աւելի անգութ ու փասակար հանդիսացած են: Ասոնցմէ ոմանք ալ՝ Իրենց բռնած աննշան զրից պատճառաւ: Հայ ժողովրդին ծառայութիւն մը չեն կրցած մատուցանել: Պաշտօնագիրն կը յաւելու թէ ժողովրդին վիճակը օրէ օր կը դէժնայ. շնորհուած ընդհանուր ներողութիւնը աւելի ծառայած է Տաճկաց՝ Իրենց բանտարկները ազատելու համար. իսկ Հայերն քիչ մ'ատեն ազատ ձգուելէ վերջ վերստին բանտարկուած են՝ մեծ մասամբ: Եւզոնիոյ կողորածէն վերջը՝ հոն զրկուած քննիչ յանձնաժողովը թէև խուճր մը Տաճիկներ մահու ու զանազան ծանր պատիժներու ենթարկեց, բայց արդարութիւնը չի գործադրուեցաւ: Տեղւոյն կառավարիչը, որ մտտ ունէր այդ ջարդերու մէջ, ինչպէս նաև ուրիշ յանցաւորներ ազատ կը ջրջն այժմ, և շատեր

ալ կ'անկալուի որ հեռզհեռէ ազատ պիտի արձակուին: Այս ամենն մտանալ ընելէ վերջ՝ Դեսպանն կը պահանջէ որ պէտք եղած միջոցները ձեռք առնուին ծրագիրը գործադրելու համար, որպէս զի անցելոյն մէջ պատահած տխուր դէպքերն չի կրկնուին նորէն:

Այս քանի յորդ պահանջն է... Իտալական խորհրդարանի անդամ և արմատականաց պարագլուխ Սինիօր Գալարբոթի Հայաստան, որ ջարդերու ժամանակ ինպատո շայտջ բաւական աշխատեցաւ, անցեալ Կիրակի ծր մենամարտի մը մէջ վիրաւորուելով մեռած է: Յիշելով մեծ բանաստեղծ մ'ու հուշակաւոր հրապարակախօս մ'էր:

Ս. Պապը իւր Գահանայագետութեան 20րդ տարեդարձը տօնեց վերջերս: Վաթնուս հազարէն աւելի ուխտաւորներ ժողովուեցան ի Հռոմ սա առթիւ, որք բերած էին հետեւին 25 միլիոն Փրանքի արժէք ունեցող նուէրներ:

Ռուսիոյ Միջերկրականի նաւատորմին ծովակալը Ասմիրալ Լսքերիալօֆ Պոլսէն անցած ատեն Սուլթանը չուզեց ընդունելութիւն մը տալ իրեն: Կ'ըսուի թէ նոյն ծովակալը անցեալ օր Աթէնք՝ Յունաց թագաւորին տարած է Չարին մէկ ինքնագիր նամակը, որուն պարունակութիւնը չի գիտցուիր: Ընդհանրապէս կը կարծուի թէ ծովակալը Յունաստան զրուկած է Գէորգ Իշխանը հետը առնելով Կրետէ տանելու և հոն զօրութեամբ կառավարիչ կարգելու համար դայն: Սուլթանըն այսպիսի հաւանականութեան մը առաջն առնելու համար հրաման զրկած է Կրետէի այժմեան կառավարիչ ձեռնա Փաշայի՝ իր բոլոր ուժովը դէմ կենալ, եթէ Ռուսական մարտանաւերն այսպիսի փորձ մ'ընեն: Ընթերցողը կրնայ երեւակայել թէ այսպիսի դիմադրութիւն մը որչափ կրնայ տեղի:

Ռուսիայ վերջերս սպառնալից պահանջագիր մը զրկեց Չինաստանի, որով Փորթ Արթըրը կ'ուզէր որ իրեն տրուի ճիշդ այն պայմանաւ, որով Գերմանիայ Բիօ Չիօն առած էր, Երկնային կառավարութիւնն կամաց կամաց տեղի տուաւ այս պահանջին: Բայց կը մնայ գիտնալ թէ Անգղիայ պիտի յօժարի:

Պէլճիդայի թագաւորի որդին, Իշխան Ալպէրթ, 22 տարեկան երիտասարդ մը, Ամերիկայ եկաւ այս օրեր, Միացեալ Նահանգաց կարևոր քաղաքներն այցելելու համար: Նախագահ Մաքքլիթի ընդունելութիւն մը պիտի տայ պատանի իշխանին:

ԹՂՈՎԱԿՑՈՒԹԻՒՆ ՏԻԳՐԻՍԻ

Փետր. 28, Լորէնս. Կը ցաւիմ որ ժամանակին՝ տեղւոյս նկատմամբ տուած ուրախալի լուրերէն վերջ, այսօր նրանց հակապատկերը պիտի գրեմ: Եկեղեցական արարողութիւններ ընելու և գրադարանը անդ դնելով Կիրակի օրերը օգտուելու համար մեզ շնորհուած Եպիսկոպոսականաց մատրէն մեկնելով ժողովարան մը վարձեցինք, տարեկան 300 տոլարով՝ անկախ դիրք մը ունենալու համար. սակայն ցաւալի է սակ որ, ամսականները չի կրնալ վճարելուս համար, այսօր 2-3 շաբաթ է ժողովարանը ձեռքբերուս առնուած է: Հոգաբարձութիւնը 2-3 ամիս է որ լուծուած է: Տեղ չունենալուս համար, քահանան եկեղեցական պաշտամունք չկրնար կատարել, և այսպէս մէկուսացած կը մնայ: Կըղերնեթի անդուստ առեկութիւն մ'է որ կը տիրէ ժողովրդեան մէկ մասի մէջ: Անցեալ Կիրակի երեկոյ (Փետր. 27ին) գրադարանի անգամական ժողովը տեղի ունեցաւ՝ որ հակառակ 83 անդամների՝ հազիւ 28 անդամ ներկայ էին: Ժողովը բացուելէ վերջ Տ. Ս. Պոյաճեան խօսեցաւ որ գրադարանի առ ժամանակակից բան մը ընելով չըրուինք, այլ ժողովրդեան բարեխաղութեան հիմնական քայլ մը առնելու համար, հրաւիրենք Արժանապատիւ Վաղինակ կամ Մաշթոց վարդապետներէն մին, որ տեղւոյս անցողաբաններին ծանօթ ըլլալով, ճար մ'ընեն մեր այս ժողովրդի աշխատանքական դրութեան. բայց ցաւալի է սակ թէ ուրիշ Պարոն մը բացարձակապէս հակառակեցաւ:

ՋԱՐՆՆ

ԱԶԳԱՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Մարտ 1, Միւլթերտ. Տեղւոյս Հայ գաղութը, որ երկու տարիէ իվեր Ազգային գրադարան և Կիրակիօրեայ լրարանի ժողով հաստատած է, անցեալ շաբթու ինպատակ Հայ որբերու հանգանակութիւն մը ըրաւ, որուն արդիւնքը Հ. Մաշթոց Փափագեանի միջոցաւ Ս. Պատրիարք Հօր լրկուեցաւ: Ուրախ եմ հաղորդելու ՏԻԳՐԻՍԻ ընթերցողաց թէ այս օրեր Ազգայինամ անունով ընկերութիւն մ'ալ կազմեցինք, որու նպատակը պիտի ըլլայ՝ իր կարողութեան չափով Հայ օգրի ամենակարևոր և ստիպողական պէտքերը հոգալ՝ դրամական օժանդակութեամբ: Առ այժմ ընկերութեան անդամոց թիւը 10 է: Կարծեմ այս առաջին անգամն է որ Ամերիկայի Հայ գաղութը սոյն անուամբ և սոյն նպատակաւ ընկերութիւն մը կ'ունենայ: Յաջողութիւն կը մաղթենք և կը յուսանք որ ամեն Հայ պիտի փութայ շաբաթը գէթ 5 սէնթ վճարելով, ձեռնտուութիւն մ'ընել այս ընկերութեան: ԱՌԱՔԵԱԼ

Բ Ո Ղ Ո Ք Մ Ը

Փրովիտէնս, Մարտ 1. Փրովիտէնսի Գրադարանի Վարչութեան կարգադրութեամբ, Լորէնսի Դերասանական խումբը ներկայցում մը տուաւ, Մարտ 5 ին, Շաբաթ երեկոյ, Ազգ. ժողովարանին մէջ, ի նպատակ որբերուն:

Գրադարանի Վարչութիւնը շքանայելով որ իր տրամադրութեան տակ գտնուած երկու դերասանական խումբերէն մին, կազմ և պատրաստ էր միւլթոյն շաբթուս կամ մի շաբաթ յետոյ, ներկայացնելու միւլթոյն դերը, հրաւիր կարգաց Լորէնսի խմբին՝ որ ամենէն քիչ՝ քառասուն տոլար ծախս ընելով եկաւ ներկայացում մը տալու համար... ինպատակ որբերուն:

Պ. կարգադրիչներ, Լաւ չէ՞ր ըլլար որ քիչ մը հեռատեսութեամբ կարգադրէիք ձեր գործերն. արդեօք աւելի Լաւ չէ՞ր ըլլար եթէ Փրովիտէնսի խումբը ներկայացնէր դերը և թըրէններուն տրուած դրամը խնդ որբերուն սացինք. անշուշտ Լաւ կըլար:

Հրապարակաւ կը բողոքեմ ձեր ապօրինի ընթացքին դէմ, ինկատի ունենալով որբերու կորսնցուցած 40 տոլարը:

ԿԱՐԱՊԵՏ ՍՏԷՓԱՆԵԱՆ

Ընթերցողը կը յիշեն անշուշտ թէ Լորէնսի յիշեալ դերասանական խումբին դէմ մի բողոք կար անցեալներն, որով Կարաիւրան կը պնդէր թէ խումբն ինչ ինչ եղծումներ ըրած և որբերուն անունը շահագործած էր իհարհիւ խմբին: Մենք այդ խնդիր երկու կողմէն լսելէ վերջ փակեցինք այն ատեն: Բայց վերջերս ստացած ուրիշ թղթակցութեանց նայելով, խնդիրն կարծուածէն աւելի ծանր կը թուի, զոր յանուն արդարութեան և յանուն որբերու ստիպուած ենք բանալ նորէն և խմբէն բացատրութիւն պահանջել: Ամբաստանութիւնը սա է թէ, դերասանական խումբը որբերուն ինպատակ ներկայացում մը տուած է Լորէնսի մէջ, և եկամուտը փոխանակ իր նպատակին յատկացնելու, մասամբ իր հաշուին ծախսած է՝ 20.55 տոլարի թատերական նոր հազուստներ գնելով:

Կը խնդրենք որ եթէ այս մասին ո' և է կարևոր պարագայ մը գիտցողներ կան, հաճին մեզ տեղեկացնել, որպէս զի ըստ այնմ մեր կարծիքն յայտնենք և յանցաւորներն, և թէ կան, մատնանիչ ընենք հրապարակաւ:

ՍՄԲ. ՏԻԳՐԻՍԻ

Ն Ա Ի Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր Այսօր գալիք Նիւ Եօրք — — — Սաթ, Համթընէն Վաղը գալիք Լաթուրէն — — — — — Հավրէն



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ
Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,
Տիգրիս Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ
ՏԼ. ՍԹ. Տարեկան 10 Փրանք.
Տարեկան 1 50
Վեցամսեայ 75 Բաժանորդագրին ԿԱՆԽԻԿ
Եռամսեայ 40 վճարելի է միշտ:

Մտար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱՐԱԹ, ՄԱՐՏ 12 1898.

ՈՒՐԵՐՈՒ ՍԻՆՆԱԿԸ

Վերջերս մեզ զրկուած դրամ պարունակող մի քանի նամակներ կորուած են փոսթի մէջ: Այս անտեղութիւններն չի պատահելու համար՝ կը խնդրենք մեր բաժանորդներէ և գործակալներէն որ կամ «մընի օրաբը» զրկեն մեզ, և կամ նամակներն ապահովագրեն ասկէ վերջ:
—Այվազով սկիի վիճակահանութեան դրուած պատկերին տոմսերէն կարելի է ստանալ Արթ. Մաշտոց Վ. էն, յուսթի:
—Յ. թ. Լին—Ձեր նամակը և ներկայեալը ստացած ենք: Հասցէները հաճեցէք նորէն զրկել:
—Մ. թ.—Տիգրիսի հին թիւերը սպառելու վրայ են: Ձեռքէ չենք կրնար ծախել զանոնք:
—Մ. Տ. Սէնթրըլ Ֆօլս—Անցագիր կարելի չէ այժմ առնել: Ծամբաներու մասին տեղեկութիւն ունեցողներն կ'ընեն թէ շատ ապահով չեն:
—Բանաստեղծութիւն, յօդուած, լուր ևն. հրատարակելու համար դրամ չենք ընդունիր: Մանուցումները միայն ստակով կը հրատարակուին:
—Նամակի մը պահարանը նամակին մասը չի կազմեր. չիտակ է որ ամեն նամակագիր իր հասցէն ու անունը նամակին մէջ գրէ:
—Բանաստեղծական մրցումը դեռ պիտի տեւէ. զայն չենք կրնար գոցել հրատարակելի բանաստեղծութիւններն իրոյս ածելէ առաջ:
—Հարկ չկայ ուղղութիւն գծել մեզ համար: Թելադրութիւններ միայն կ'ուզենք թերթը նոյն ուղղութեամբ աւելի օգտակար ընելու համար:
—Ս. Ո. Ֆիլչարկ. Ձեր նամակը զրկած ենք Թանգարանապետին:

ՈՒՐԵՐՈՒ ՍԻՆՆԱԿԸ

ՊԱՏԱՍԽԱՆ ՄԸ

Բարաքիս Հայ թերթիկը, որ կը խոստովանի թէ Միացեալ Նահանգաց մէջ միայն 81 հատ բաժանորդ ունի, դուրս եկաւ անցեալ շաբթու մեզ դէմ ստակալի հայհոյութիւններով լեցուն: Հմուտ գործակալ իմ բազիրը—ի հարկէ նախանձէ շարժեալ—աշխատած է այս անգամ այս կերպով Տիգրիսն ու անոր վարչութիւնը վճարանէ: Բարեգործական Ընկերութեան պաշտպանն եղած լինելու պատրուակաւ: Ի հարկէ մեզ չի վայելեր մի և նոյն ընթացքին հետեւի, այլ կը բաւականանամ հետեւեալը ընդօրինակել այս առթիւ «Բազմավէպ»ի անցեալ Փետրվար ամսուան թուէն:
«Պատճառաբանողին հետ կը պատճառաբանենք, իսկ նախատողին արժանաւոր պատասխանն է . . . լուրջութիւն»:
Հանրածանօթ թերթը Տիգրիսի մէջ հրատարակուած այն յօդուածը որ Բարեգործական Ընկերութեան մեծ ժողովը կը նկարագրէր, խմբագրական մը նկատելով կը ջանայ վարչութիւնն այդ յօդուածագրի ինչ ինչ խորհրդածութեանց պատասխանատու համարել: Բայց ուրախ ենք որ խմբագրի այս ամենէ զօրաւոր փաստը խախտու և անհիմն է բողոքովին: զի բայց ի այդ Պարոնէն, ամեն մարդ զիտէ թէ մեր խմբագրականներն այս սիւները մէջ կ'երևին միայն: Արդ, զիբրին է տեսնել թէ յարգոյ պաշտօնակցին ամբաստանութիւնն պարզ զրպարտութիւն մ'է՝ բառին բովանդակ նշանակութեամբ:
Գիտնալու է թէ Տիգրիս այնչափ կը սիրէ Բարեգործական Ընկերութիւնն, որչափ կը սիրէ Հայ ժողովուրդն ու անոր իրաւունքները: Պէտք է գիտնալ նաև թէ ընկերութեան մը կամ անոր այս և այն պաշտօնէի սխալը քննադատելն թշնամութիւն չէ, այլ ընդհակառակն՝ այս կամ այն մեծատունին հաճելի թուելու համար՝ ընկերութեան մը սխալներն շոյել ու փայտայելը, որպէս կ'ընէ մեր բարի դրացին, ոճիր մ'է ազգային:

Վաճառականութիւնը առնակ մը փոխանակութիւն է, որով մարդս իր ունեցած մէկ առարկան կը փոխանակէ ուրիշ պիտոյքի մը կամ անոր հաւատար արժէքը ներկայացնող մետաղի մը կտորին հետ:
Եւրոպական մատենագիրներէն ոմանք կը կարծեն թէ վաճառականութիւնն առջի անգամ Հրէից մէջ ծնունդ առաւ, երբ Յակոբ իւր զաւակներն Եգիպտոս զրկեց ցորեան գնելու համար: Բայց Հայր Ղուկաս Ինճիճեան իրաւամբ դիտել կոճայ իր Հնախօսութեանց մէջ թէ վաճառականութեան խանձարուրը Հայաստանի մէջ բացուած է՝ ուրիշ քանի մը արհեստներու հետ մէկտեղ: Մեր հմուտ Հնախօսին կը համաձայնին ուրիշներ ալ այս մասին, ինչպէս է Հուրիոս պատմիչ, որ իր՝ նախկին վաճառականութեանց ու նաւարկութեանց վրայ գրած գրքին մէջ կը վկայէ թէ «Գետեզերք Եփրատայ որպէս խանձարուրը եղին մարդկային ազգի, նոյնպէս և եղին վաճառականութեան»: Եւ արդարև ընական էր որ այսպէս ըլլար:

Առաջին մարդը Դրախտէն ինչպէ վերջ ի հարկէ նախ աշխատեցաւ հաց գտնել, որուն համար հողը մաշակել ըսկըսեց: Երկրագործութեան ծնունդն էր այն, արհեստներու ամենէ ազնիւին սկզբնաւորութիւնը, որով զբաղող մշակին առևտուրը այնպիսի մէկի մը հետ կ'ըլլայ, որ ո՛չ սակարկութիւն կ'ընէ և, ո՛չ ալ խարելու կամ խարուելու հուսակներն ունի:
Բնականաբար վաճառականութիւնն երկրագործութեան հետեւող արհեստներէ մին ըլլալու էր, որով երկրագործը իր ցորենով կամ հացով պիտի փութար ուրիշ պիտոյք մը գնել: այդ էր վաճառականութեան սկիզբն ու ծնունդը:
Հայր լինելով աշխարհի առաջին վաճառական ազգը, ըստ երևոյթի ուրիշներէ աւելի յաջող հանդիսացան: Աշխարհի պատմութիւնն թէ և չի խոստովանիր զայս, բայց Սուրբ գիրք բաւական են ճշմարտութիւնն իրոյս բերելու համար: Եղեկիէլ ըսած է իր մարգարէութեան մէջ (Պլ. 27 14), թէ «Եւ ի տանէ Թորգոմայ ձիովք և հեծելովք և ջորուք լցին զվաճառս քո»: Սողոմոն իր հաշակաւոր Տաճարին համար ոսկի և պատուական քարեր Սպերէ կամ Օֆէրէ գնեց: «Անդ ուր ոսկին էր, ոսկի երկրին այնորիկ ազնիւ, (Մն. Թ. 11):»

Սպեր կը կարծուէր երբեմն թէ Հնդկաստանի մէջ կը գտնուէր: Պատմիչը ու խուզարկուք իզուր տեղը հոն փնտռեցին այդ գաւառը. ոմանք Արիւրիկէ տարին զայն. ոմանք՝ ուրիշ այլ և այլ կողմեր փոխադրեցին: Բրիտափոր Բորնոմպոս երբ Ամերիկան գտաւ, կարծեց թէ հոն էր ոսկիի այդ համբաւուր երկիրը: Բայց Սպերն Հայաստանի մէջ էր: Պատմիչներն հետզհետէ սկսեցին ընդունիլ այս ճշմարտութիւնն: Կայմէտ Ժամանակակից պատմաբանն կը պնդէ արդէն թէ «Այս տեղի է ի Հայաստան ի կողմանն ականց Տիգրիսի և Եփրատայ»: Հայր Ինճիճեան արդէն բազմաթիւ փաստերով ապացուցած է այս ճշմարտութիւնն իր Հնախօսութեանց մէջ: Հատոր Ա. 220—231:

Սակայն հեռուոր անցելոյն մէջ առաջին վաճառական ազգը լինելը գրական օգուտ մը չի բերեր մեր ազգին, եթէ իր տակուին ունեցած այդ ձիրքէն և յատկութենէն այժմ չի կարողանայ օգտուիլ: Արդարև առակի կարգ անցած է այժմ թէ Հայք յարմարութիւն ունին վաճառականութեան, անանկ որ սովորութիւնն եղած է ըսել «Երեք Յայերն հազիւ կրնան Հրեայ մը խարել, բայց Հայ մը խարելու համար երեք Հրեայներ պէտք են—առևտուրի մէջ»:
Կրնայ ըլլալ որ երբեմն ճշմարտութիւն մ'էր այս, բայց ներկայիս մէջ աննշան խօսքեր են միայն, զի մենք ոչ միայն Հրէից՝ այլ և Յունաց հետ համեմատուելու դրից մէջ չենք ընաւ:

Կան սակայն մեր մէջ մարդիկ որա կը խարեն իրենք զիրենք՝ կարծելով թէ իրօք մենք կարող ենք մրցիլ այդ ազգերու հետ. բայց ճշմարտութիւնն սա է թէ, ո՛չ միայն երեք Հրեայի պէտք չկայ Հայ մը խարելու, այլ տասը Հայեր պէտք են Հրեայէ մը չի խարուելու համար: Պարագ տեղը կը փայտայենք մեր սնափառութիւնն ու Հրէից հետ համեմատութեան կը մտնենք:
Սակայն չէ կարելի ուրանալ թէ Հայ վաճառականութիւնն երկրագնտի մէկ ծայրէն միւսը արձակած է իր ճիւղեր: Չինաստանէն մինչև Ամերիկայ, Հնդկաստանէ մինչև Եւրոպայ Հայ վաճառականութիւնն ունի իր հազուագիւտ ներկայացուցիչն, բայց երբ այս մասին մենք անհամեմատ յառաջացած ազգի մը հետ համեմատութեան մը տեսնել կը փորձենք, կը խաբուինք չարաչար. Հրեայն աշխարհի տիրած է այս մասին:
Սողոմոնի ժառանգ Տաճարին համար Հրեայք մենք կուգային ոսկի գնել, բայց այսօր բոլոր աշխարհ իմաստուն թագաւորի Չճուտ զաւակաց կը դիմէ պատուական մետաղէն մուրալու համար:

Արդ ուրիշ ազգերու հետ համեմատուելու գաղափարն

ՈՐԵՐՈՒ ՍԻՆՆԱԿԸ

Մարտ 1, Ուսթըր.
Այս վայրկեանս ճամբայ կը հանեմ որբերու համար երկու կարեւոր գումարներ՝ զորս Ամեն. Ս. Պատրիարքի սրամարտութեան տակ դրած է Ամերիկայի Հայութիւնը:
1- Ուսթըրէն 30 Օսմ. լիբայ, զոր միացուցելով Սարրերդ զրկուած 30 լիբայի հետ, կը լինի 60 լիբա, որոյ մէջն է Միլֆըբուրի \$ 25 Ը: Հանգանակութիւնը կը շարունակուի:
2- Թրոյէն \$ 75, զոր այժմ ստացայ և ամիջապէս պիտի դրկեմ: Թըրոյի մէջ կազմուած «Հայոց Հայրենասիրական միութեան» է այդ ձեռնարկութիւնը:
Այսօր Պատրիարքարան զրկեցի որբերուն համար \$ 70:

Որբերուն ինպաստ Հայ արուեստագէտ Պ. Ս. Երկանեանի նուիրած իւզանկար գեղեցիկ ընտանեկան տեսարան անուրդի դրուած է. ով որ կուզէ որբերուն նպաստ մը ընել, սիրուն պատկեր մը գնելով, թող դիմէ ինձ: Ամենէն նուազ գնահատողի գինն է ցարք \$ 10:
ՄԱՇԹՈՑ ՎԱՐԴԱՊԵՏ

Փետր. 28ին Շիքակոյի մէջ տունեցաւ Վարդանանց հանդէսը տեղւոյ լսարանի ընկերութեան կողմէ: Հանդիսին մէջ ինպաստ որբերու հանգանակութիւն կատարուելով \$ 86.50 տոլար հաւաքուած է, որ մտներս պիտի դրուի Օրմանեան Պատրիարքին:

Անցեալ Շաբաթ Հրատարակչական շաբթուի մէջ գտնուող փոքրագիր հայերը ժողով մը ընելով որբերուն համար հանգանակեցին \$ 61, գրեթէ 40 հոգիի մէջ. այս գումարին \$ 25ը յատկացուած է Լաքու վոլոց թիւ 15 Հայոց տունէն Կեսարիոյ որբանոցին մէջ որբ մը պահելու համար, իբր առաջին տարուան կանխիկ ծախք, (եօթենակի դրութեամբ): Իսկ նոյն քաղաքին Ափսիս ուղարկ գործարանի Հայոց տունը որոշեց իր շաբաթական ապրուստին վրայ շաբաթ մէկ տօյ. աւելի հաշուել, յատկացնելով զայն որբերուն:

Սերաստիոյ որբանոցում յանձնարու միւսին \$ 2 նուիրած է Հրատարակչական Տիգրիկիցի Պ. Յ. Սիրանոսեան:

ԱՆՄԵՂՈՒԿ ՏՐՏՈՒՆՁ ՄԸ

Երկու օր է որ չէ մտեր Պատառ մը բան իմ բերան. Ուժով զարկի շատ մը դռներ, Պաղատեցայ որ հաց տան:

Ոմանք եկան տանիքին ծայր, Ու ետ գացին անխօսուկ. Ոմանք ըսին «այ Աստուած սոսայ, Սա ոչ հատ մ'է ոչ երկուք»:

Հազուատներս են ծուրիկ ծուրիկ, Այլ չեն բռներ կարկատան. Գլուխս է բաց, ոտքս է բռպիկ, Չունիմ տուն տեղ տիրական:

Ինձ կ'ընեն թէ «այ Աստուած տայ» Դէ՛հ կը խնդրեմ ծնկաջօք. Ի՞նչ էր մեղքս. Աստուած գթա՛, Բաւ չէ նայիս ծուռ աչօք:

Տասը տարիս չէ լրացեր, Եղայ թշուա՛ն մ'ուրացկան. Աչքերս առջև վայրագ թուրքեր Չարկին Հայրիկս՝ իմ պաշտպան:

Իսկ անուշիկ սիրուն մայրըս Մեռաւ վախէն՝ կրկիծէն, Որ մնացի ես Արամբն, Աչքերս թաց արցունքէն:

Ս. ՀԶՐԻՑ

մէկըի դէպքով՝ ջանանք ցոյց տալ թէ ինչո՞ւ մենք Հայերս մեր ունեցած այս ձիրքէն՝ վաճառականութեան կամ առևտուրի ունեցած յարմարութենէն չենք օգտուիր՝ ըստ բաւականին, մանաւանդ օտար երկիրներու մէջ, ի մասնաւորի յԱմերիկայ:

Հարկ չկայ ապացուցանել թէ Թուրքիայէ դուրս — ուր յառաջանալու ձգտում ունեցող մարդուն առջև չկայ ասպարէզ — մենք շատ ետ ենք ուրիշ բազմաթիւ ազգերէ: Իրաւ է որ կրնանք լաւ յառակազիծներ յղանալ. գործ մը կառավարելու վարչական մեծ կարողութիւն ցոյց տալ — խօսքի մէջ —, բայց երբ կուգայ գործնականին՝ յետս կ'ընկնենք, գո՛ւ ըլլալով շոր հացի պատառով, զոր ձեռք կը բերենք մեր ժամանակն ու կամքը այս և այն գործարանապետին վաճառելով:

Այս երևոյթը յայտնապէս ցոյց կուտայ թէ բարոյական գործութիւն, քաջութիւն և անձնական ինքնավստահութիւն կը պակսին մեր մէջ: Ասոր պատճառն կարելի է փնտռել մեր սասցած կրթութեան, դարերէ ի վեր մեր կրած տարբեր տարբեր ազդեցութեանց մէջ:

Հայը անհամատեղ քաջութիւն ունի ի Թուրքիայ անկախ գործ մը՝ առ և տուր մը ընելու համար, որովհետև այն ցեղեր որոց հետ կ'ապրի հոն, մտաւորապէս անհամատեղ վար են իրմէ, անանկ որ ամեն պարագայի մէջ վստահ է թէ յաջողութիւնն ու առաջնութիւն իր կողմը կը մնան ամեն մրցման մէջ՝ առևտուրի հրտապարակին վերայ: Բայց հոս, յԱմերիկայ, շրջապատուած ըլլալով յառաջադէմ ազգերէ՝ լաւագոյն կը սեպէ՝ ընդհանրապէս՝ իր ժամանակն ուրիշի վաճառել, փոխանակ ազատ ասպարէզի մէջ մրցման մտնելու: Առանց փորձի և մրցման չ'կայ յաջողութիւն:

Հասարակելու համար մեր ըսածներն, պէտք եղածէ աւելի ապացոյցներ կրնանք մէջ բերել Ամերիկայի Հայ գաղթականութենէն: Երկար ժամանակէ ի վեր հոս հասարակութեան անհամար անհաշիւ իրենց ահագին թուէն հազիւ մի քանի գործի և վաճառականութեան մարդիկներ արտադրեցին. մնացեալը երկար տարիներէ ի վեր կը գործեն ու կը գործեն անխոնջ շոգիին հետ, նման այն մարդուն որ երկրագնդի ծայրը գտնելու համար ճանապարհ կ'իյնայ:

Ամերիկայի Հայ գաղթականութիւնն սկսած է գալ մօտաւորապէս քարոզի դարէ ի վեր. և այս երկայն ժամանակամիջոցի մէջ՝ համեմատաբար՝ շատ քիչեր կրցին օձիքնին ազատել գործարանապետի ձեռքէն, ու դիրք մը բռնել հրապարակի վրայ: Բայց մեզ հետ եկող Յոյնն ու Հրեայն, մանաւանդ վերջինն տարբեր դրութեան մէջ է այժմ: Մեր չի հաւանած Ձիհուսը, մենէ երբեմն շատ աւելի տգէտ, աղքատ, տձև, երկրի Գրիստոնեայ ժողովրդի անկախ այդ բոկոտն գաղթականը, զոր կանգուն ենք միամտաբար, քանի մը ժամանակ փողոցէ փողոց կուճակ, թաղիկնակ ևն. վաճառելով դիրք մը բռնած է այսօր շուկային վրայ, մինչդեռ մենք, աւելի կրթեալ, վաճառականութեան բնական յարմարութիւն ունեցող Գրիստոնեայն, խելացի մարդիկներ՝ դեռ կը ծառայենք այս և այն անհատի կամքին, Աստուծոյ ողորմութեան սպասելով:

Ուր կը մնայ այն ձիրքն ու յարմարութիւնն որով կը պարծենանք շատ անգամ: Մենէ վերջ եկող Յոյնը՝ գործարանէն շուկայ ելաւ, դիրք բռնեց, բայց մենք հոն ենք ուր էինք տարիներ առաջ. և աւելի ցաւալին է թէ փորձեր ալ չենք ըներ այս սոսկալի բռնութենէն ազատելու համար:

Բոսն տարի առաջ Պրոտուէի վերայ հազիւ թէ քանի մը Հրեայ սուներ կարելի էր տեսնել, բայց այսօր քաղաքիս այդ հոշակաւոր պողոտան տեսակ մը Հրէաստան դարձած է:

Յոյնը մենէ շատ աւելի զարգացած է այս մասին. իսկ Հրեայն, իր բոլոր խոտելի կողմերով, մեզի հետ համեմատութեան իսկ չէ կարելի դնել: Հ. Է.

ԲՈՂՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԵՄ

ՏԻԳՐԻՍԻ 17րդ թուի խաբազարկոտին մէջ ըննադատած էիք Հայկազեան Կաճառը, ըսելով թէ «Թանգարանի Միութեան վերջի անախորժ դէպքը առիթ տուաւ (Կաճառին) գիտնալ թէ իրենց ընկերութիւնն ալ անկախ մարմին մը չէր Ս. Բարթողիմէոսի հովանիին տակ», և կը ցաւէիք որ անդամներն երեք տարիէ ի վեր խաբուած էին գիտութեամբ կամ անգիտութեամբ:

Թոյլ տուէք ըսեմ որ կ'սխալիք Ձեր տեսութեանց մէջ: Յաւակցութեան արժանի են անոնք որք իրենց գրքերը Կաճառի սենեակը փոխադրեցին՝ առանց վարիչներուն լուր տալու: Այս մասին թէ և Պատ. Եռնահանայի հաճութիւնն առած էին, բայց այդ անձ մեր քուէով ընտրուած չ'ըլլալով՝ ստիպուեցաւ նորէն գրքերն ետ դրկելու:

Մեր խաբուած ըլլալու մասին այսչափս միայն բաւական է ըսել թէ չէնք Վարչութիւնը մեզ առանձին օրէնքներով ընդունեց այդ կրօնատան մէջ, բայց մեզ տըրուած իրաւունքներն վերջէն բռնաբարոյի սկսեցին. այս անանկով Կաճառի անդամք՝ վեհանձնութեամբ ձգեցին չէնք: Արդ այս պարագաներու մէջ որո՞նք վրայ ցաւիլ հարկ է: Ընթերցողին կը թողում որոշել: ԱՆԴՍՄ ՄԸ

ԲԱՐԵԳՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԻ ՆԻՍՏԸ

Բարեգործական Ընկերութեան Գործադիր Ժողովոյն վերջի նիստը տեղի ունեցաւ Տքթ. Տարեանի տունը, ի ներկայութեան շորս անդամոց, խորհրդատուներու և հիւրի մը: Տ. Քէլէկեան Եւրոպայ երթալու գիտաւորութիւն ունեցած ըլլալուն համար, հրաժարականն ըրկած էր: Տ. Քէլէկեանի հրաժարականն ընդունուելով՝ անոր յաջորդ ընտրուեցաւ Տ. Ալէոն: Բանի մը բարեգործական կարևոր խնդիրներ կարգադրելէ վերջ, ժողովն անցաւ գործակալի ընտրութեան: Այս պահուս կարգացուեցաւ Տ. Չարչաֆճեանի հրաժարագիրը՝ ծանոցաւ նաև թէ Պատ. Սամուէլեան ալ հրաժարած էր թիկնածութենէ. ուստի մնացեալներու վրայ քուէարկութիւն կատարուելով՝ Տ. Տիգրան Յակոբեան Գործակալ ընտրուեցաւ Բարեգործական ընկերութեան:

ՄԵՍ ՀԱՆԻՔՍ Ի ՓՐՈՎԻՏԵՆՍ

Մարտ 8

Տեղւոյ Գրադարանի վարչութիւնը մեծ հանգէս մը տուաւ Թանգարանի տարեգարծին առթիւ անցեալ կիրակի: Ժողովարանը զարդարուած էր շատ գեղեցիկ կերպով: Բազմաթիւ գրքեր և 15ի չափ զանազան ազգային թերթեր կը տեսնուէին բեմին վրայ:

Հանգէսը սկսեցաւ «Աստուծոյն կը հիմնենք» երգով. յետոյ վարչութիւնը իր հաշիւները ներկայացուց, որմէ կը տեղեկանանք թէ վերջի երեք տարիներու մէջ թանգարանը ունեցած է 350 կտոր գիրք՝ 500 տորարի արժողութեամբ. ունի նաև 90 տորարի թատերական հանդերձներ: Մտից գումարը եղած է \$574.24, իսկ ելքն է \$540.75:

Ուսիճրի Գրադարանի ներկայացուցիչը Տ. Գույուժեան այս առթիւ ատենախօսեց. Օր. Լուսիա Սարգիսեան, 10 տարեկան, Գուրեանի (իմ ցաւը) կարգաւ, ուրիշ փոքրիկներ ալ կարողացին ճանաչել ու ոտանաւորներ:

Փրօֆ. Եէշիբեան մեծ տպաւորութիւն ձգեց Հանդիսականաց վրայ իր համառոտ ատենախօսութեամբ, որ ի մէջ այլոց ըսաւ «ազգասէր ըլլալու համար կարգացէ՛ք Բաժնի գրքերն. իսկ Գրիստոնեայ ըլլալու համար կարգացէ՛ք Ս. Գիրքը»: Մտախազարութիւններէ ու երգերէ վերջ խօսեցաւ Տիկին Սարկաւազեան, որոյ ատենախօսութիւնն զգալի փոփոխութիւններ յառաջ կը բերէր Հանդիսականաց երեսին վրայ: Տիկին ատենախօսն շատ լաւ բացատրեց մտքի ոյժն ու անոր գործած հրաշքներն: Խօսքն ուղղելով գեղեցիկ սեռին յարեց «Հայ երկունքէ ծնած ու մեծցած մայրեր՝ ու քոյրեր, ինչպէս որ նաբօլիոն ըսաւ, «մայրեր կուգեմ Գաղղիան ազատելու համար», նոյնը ես կը կրկնեմ. մայրեր կ'ուզեմ, որ իրենց զաւակները կըրթեն, մտքի ու զաղափարի բարձրութեան հասցեն զանոնք»: Տիկին Սարկաւազեան, որ պարզ և մէջ այս գաղթականութեան համար, երկար ծափահարութիւններ ընդունեց:

Հանդիսին փալ տուող մէկ մասն էր մոզական լապտերը, որով Տ. Եաղճեան 30 պատկերներ ցուցուց ու Տ. Սամուրեան բացատրեց զանոնք: Պատ. Պէննէեան, մեր պերճախօս ատենաբանն, խօսեցաւ այս ցոյցերէն վերջ: Եւ ապա Պարոնիկ Քէնտէրեան քանի մը զուարճալիքներ կարողացավ Հանդիսականները պահ մը գուարճացնել յետոյ, խօսեցաւ Արժ. Տ. Վաղինակ վարդապետ, որ նախորդ ատենախօսներու ըսածներն բացատրելէ զատ յորդորեց ժողովուրդը որ քաջալերէ Գրադարանի Ընկերութիւնն: Այս հանդիսի մէջ 26 նոր բաժանորդներ ունեցաւ Ընկերութիւնն, եւ երկու՝ մէկ մէկ կտոր գիրք նուիրեցին Փրօֆ. Եէշիբեան և Պատ. Պէննէեան: ԲՈՒՌՎԱՌ

ՄԱՀԱԳՈՑԺ

Ցաւ ի սիրտ կը ծանուցանենք թէ անցեալ երկուշաբթի երեկոյ, յետ կարճատև հիւանդութեան, իր մահկանացուն կնքեց Տիկին Մարիամ Չամալեան՝ ի սուգ անմխիթար թողւով իւր ամուսինն, երեք զաւակներն ու բոլոր Չամալեան զերգաստանն: Երեքշաբթի օր՝ 30րդ՝ փողոցի Հայ Աւետ. եկեղեցւոյ մէջ յատուկ պաշտամունք կատարուեցաւ Հանգուցելոյ մարմնոյն վրայ, ուր Պատ. Խաչոյեան, որ առաջնորդեց պաշտամանը, յարմար դամբանական մը խօսեցաւ: Հանգուցելոյն մարմինը թաղուեցաւ Սիրտը կրօզ գերեզմանատան մէջ, ուր յուղարկուորութեան զնացին շատ մը ազգայիններ:

ԱԶԴ

Յառաջիկայ կիրակի, կէս օրէ վերջ, Ս. Ոսկերեան եկեղեցւոյ մէջ Ս. անմահ Պատարագ պիտի մատուցուի, և յետոյ, յատուկ կարգադրութեամբ պիտի քարոզէ մեծ Պահոց առթիւ Տ. Թովմաս Չաւաւաթճեան: Ամեն Հայ հրաւիրեալ է ներկայ գտնուիլ և լսել այս հանրածանօթ ատենախօսը: ԱԶԳ. ՀՈՂԱՌԱՐՁՈՒԹԻՒՆ ՆԻ ԵՈՐԵ, 9 ՄԱՐՏ, 98

Չամալեան ընտանիքը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ ամէն անոնց, որոնք հաճեցան ներկայ գտնուիլ հանգուցեալ Տիկին Մարիամ Ե. Չամալեանի հուղարկաւորութեան, և իրենց ցաւակցութիւնը յայտնեցին այս տըրտուր առթիւ:

ԲԱՆԱՍՏԵՂՄԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Ի Մ Ս Ի Ր Ա Մ Ս

Երբ տեսնէի ամեն Հայեր, Աղջիկ տղայ և թէ մայրեր, Ուսումնական ըթերցասէր. Այս է ահա փափաքածս,

Իմ սիրածս:

Չեռքը գրիչ օրիորդին, Թերթ մը քովը գրքը մ'ալ անդին թէ յօրինէ երբ մը ազգին, Այս է ահա իմ երգածս,

Իմ սիրածս:

Երբ տեսնէի շատ վարժատուն, Թանգարաններ խմբադասուս. Սեփականին ամեն Հայուն. Այս է ահա իմ երգածս,

Իմ սիրածս:

Երբ ՏԻԳՐԻՍԸ տեսնէի որ Օրաթերթ է եղած մեզ՝ նոր, Կը վաճառուի սաղ ամեն օր. Ահա այն է իմ գնածս,

Իմ սիրածս:

Նիւ Եօրք Ղ. ՊՅԱՍԵԱՆ

ԱԶԴ

Մարտ 7

Յառաջիկայ Շաբաթ երեկոյ, Մարտ 12 ին, ժամը 8 ին, Նէշուէի Դերասանական խումբը պիտի ներկայացնէ Վահէի ողբերգութիւնը, ի Պօսթօն, Ուշինկթըն փողոց, Պիճօ ֕Օֆէրա Հաուզին մէջ, ի նպատակ նէշուէի Գրադարանին: Տ. Յ. Սարկաւազեան պիտի երգէ: ԽՄԲԱՅԵՍ Ե. Պ.

Մ Ա Ն Ի Ա Ն Ո Ւ Բ Բ

—Իրեզանդիոնի մէջ կը կարգանք հեջեալը: «Երու սաղէմի միաբաններէն Խարբերցի Տ. Կիւրեղ աւագ Սարկաւազ խապայեան, որ քանի մը տարիէ ի վեր Ամերիկայի մէջ Աստուածաբանական ուսմամբ կը պարապի, Ամերիկայի ազգայնոց խնդրանաց վրայ՝ վերջերս Տիգրիս գացեր և Ս. Հայրապետին ներկայանալով՝ Ամերիկայի ընդհ. Հայ գաղթականութեան համար ուսեալ, լուրջ, բանիւրուն և յարմարագոյն այցելու—հովիւ նոր վարդապետ մը ինդրեր է: Ն. Օծուլթիւնը խոստացեր է յարմար եկեղեցական մը ըրկել»:

—Ուէսթ Հոպլընի մէջ Գարբիէլ Տարխանեան՝ Ակնցի, ամուսնացաւ Սեբաստիացի Օր. Հայկանուշ Տէր Պետրոսեանի հետ:

—Գարակէօզեան եղբարք խալիի ընդարձակ վաճառատուն մը բացած են ի թիւ 365 Պրոտուէ:

—Յառաջիկայ կիրակի երեկոյ Տ. Չիթճեան պիտի խօսի Ազատ Լաւրանի մէջ՝ նիւթ ունենալով «Հայոց եկեղեցին և Հայութիւնը»: Հրաւիրուած է նաև խօսիլ Պատ. Հայկունի:

—Տ. Թավչանճեան և Տքթ. Այվազեան Բարեգործական Ընկերութեան Գործ. ժողովոյ անդամակցութիւնն չեն ընդունած, բայց կը մնան իբր խորհրդատու անդամներ:

—Արք. Փափազեան տարի մ'առաջ մէկ ամիս պայմանաժամով, 159 տուր փոխ տուած էր իր բարեկամներէ մէկին՝ Յ. Թորոսեանի, որ քաղաքիս մէջ նպարավաճառի խանութ մ'ունէր, 35րդ փողոցի մօտեր: Պարտապանն իր այս պարտք վճարել կը մերժէ. եւ օրէնքի խտուրթնէ ազատ մնալու համար, քանի մը տմիսներ առաջ իւր խանութն ուրիշ Հայուն մը անուան դարձնելով կը փոխաբերէ զայն ուրիշ տեղ մը՝ գործը շարունակելով գարձեալ մի և նոյն գրութեամբ: Փափազեան զատ բացաւ վերջերս նպարավաճառին դէմ՝ ամբաստանելով թէ ապօրինի վաճառում մը ըրած էր: Այս դատ տեսնուեցաւ անցեալ օր: Գատարն վճանց թէ Թորոսեան յանցաւոր էր, և թէ խանութն իր օրինաւոր սեփականութիւնն էր այժմ:

Ն Ո Ր Ա Վ Է Պ

ՀԱՅ ՊԱՆԴԻՍԻ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻԾ

«ՊԻՏԻ ԶՂՋԱՍ»

(Շարունակութիւն)

Երբ կը մտատանջուէր սոյն խորհուրդներով, իւրաքանչեւ եկաւ երախան և ընդ տանիւնը հանգստացնելու:

—Հոգ չէ, ըսաւ նուրի խան, այս օգին մէջ աւելի հասնուիստ կ'առնեն քան թէ յ'անկողնի: Դժուար ևս նստիր պահ մը ինձ մօտ. քեզի այն ասեմ թէ ի՞նչ է այս տղոյն վիշտը որ գոթամ կ'երեկ:

—Ա՛խ, մայր, ինչ ասեմ, ես ևս չէի գիտէր, և սչ ալ ինք մի բան ասած էր, միայն այսօր մեր դրացի Սողիկէն իմացայ որ, Ամերիկայ գնալ կուզէ եղբր, մեզ աւելի բաղդաւոր ու երջանիկ ընելու համար: Սակայն կ'երկնչի եղբր թէ դու չես հաճիր և ոչ ալ ճանապարհածախսը հայթայթելու միջոց կուտաս. բայց երզւունցեր է երախայնի գլխին թէ ինչ որ ալ ըլլայ պիտի գնայ և մեզ... այո՛, մեզ աւելի երջանկացնելու և բաղդ աւորելու համար, յարեց խեղճ մայրը դառն հեգնութեամբ:

Երբ, դեռ այս խօսքերը կը շարունակուէին, Արուստէն դարձաւ և պատուելիքն որ զինք առաւօտ էզուց զարթեցունեն, վասն զի քաղաք պիտի գնայ:

—Ի՞նչ ընելու համար, հարցուց մայրը:

- Հաճի կ'էլ տեսնելու:
- Ի՞նչ ըսելու:
- Ստակ առնելու համար:
- Ի՞նչ ընելու ստակը:
- Ամերիկայ գնալու համար:
- Ի՞նչ գործելու յ'Ամերիկայ:
- Փող վաստակելու և ձեզ աւելի երջանկացունելու:

—Փող վաստակելու և մեզ աւելի երջանկացնելու, կրկնեց մայրը դառնութեամբ. Արուստէն, սիրելիս, դա սոցալական շը լինի, երբ դու քու ցանածդ հունձը դաշտի երեսին կը թողուս ու կը գնաս շ'ցանածդ հնձելու: Ի՞նչ վստահութեամբ կամ ի՞նչ ապահովութեամբ կը ձեռնարկես գնալ այդ հեռու աշխարհը, ուր քեզի համար նոր է ամեն բան ու անձանօթ:

—Այո՛ մայր, և միթէ գաղանիքը չե՞ս խորհրդի որ հեռուորութեան և անձանօթութեան մէջ է: Տե՛ս, Տեր դրացի Պարսամը, Բարսէն և Համբարը դեռ վեց ամիս չ'լինի գընալին, ու թոռնական ոսկի խաւրիցին իրենց անկրին: Ինչ, միթէ ես վատ ծնած եմ. երբ կը տեսնեմ նազքա կը շահին, և ինչո՞ւ ուրեմն ես պիտի չ'յաջողիմ:

—Խեղճ մայրը կ'ունկնդրէր լուսթեամբ և կը ցաւէր խորապէս պարզամիտ որդւոյն դատողութեանցը: Ետեռ առաւ յաջէն ձախ, վասն զի ծնեցերը ընդարմացրէին երախայնի երկար ատեն անոնց վերայ ինկած ըլլալուն համար, և ուստի իւրաքանչեւ վերցուց նոցա ու տարաւ անկողին:

—Արուստէ, լաւ որ դու ասիր, թէ վեց ամիս չ'լինի գնալին. ուրեմն ի՞նչպէս կարելի է հաւատալ որ երկու ամիսի միջոցին կարող կ'ըլլան այդ գուժարը շահիլ, քանի որ այս տեղէն գնալու և այդ փողը հոս հասնելու համար առնուազն չորս ամիս պէտք է:

—Եւ ինչո՞ւ չես համոզուիր մայր, որ ութսուն ոսկի շահելու համար երկու ամիսը բաւական երկար միջոց է. և նամանակնդ հարուստի երկիր է և մեզ Հայերս շատ կը սիրեն. ուստի վստահ եմ յ'ամենայնի, ըսաւ Արուստէ:

(Շարունակելի) ԱՔԱՅ-ԿԱՏԻՆԱՅ

ԾԱՌՈՒ ԽԱՆՈՒԹ

Կուգամ ծանուցանել թէ Լսթամ-Փրատի մէջ խանութ մ'ունիմ, զոր վաճառել կ'ուզեմ. սորա մէջ կան շաքարեղէններ, պտուղներ, ծխախոտ, սիկար, սիկարէթ ևն. ևն. Գնի և մանրամասնութեանց համար գրիմէլ առ՝

ՄԵՍՐՈՊ Ս. ԳԱԶԱՆՃԵԱՆ
26 Փոփթիք Սթ.
Սթէմֆորտ-Քօնն:

Պ Ա Կ Ա Ս Մ Ը Մ Ե Ր Մ Է Ջ

Կենաց ապահովագրութեան ամենապատահելի Ընկերութիւն մը կը ներկայացնէ Աղք. Թ. Տարազճեան: Պայմանք գերամատչելի են:

Լիուրի բացատրութիւնը հաճութեամբ կը տրուին փափաքողաց:

Հասցէ՝

77 Ուէլսթ 11րդ փողոց, Նիւ Եորք

ԹԱԳԱԳՃԵԱՆ ԵՒ ՇԱՀԻՆԵԱՆ ԸՆԿ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՇԱՐԱՆ

Թիւ 242 Իսթ, 41րդ Փողոց

Պատիւ ունին ծանուցանել թէ, այս նոր ճաշարանն բացած են սա վստահութեամբ միայն թէ մաքրութիւն և ընտիր խոհարարութիւն միշտ կը գնահատուի հասարակութեան կողմէ:

Միանգամ փորձելն բաւական է մըջ տընջնական յաճախորդ ըլլալու:

Հ Ի Բ Զ Օ Լ Ա

ՄԱԶԻ ԴԵՂ



Կը գործունէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի հիւսն-գուծիւնն ու կը մաքրէ թեփերը: Միանգամ փորձել բաւական է սա դեղին արժէքը դիտնալու համար, յրաքելեան խոտն ոչ պատարաստած է յոյժ հաճելի մի հատով:

Կը ծախուի րուր գեղազործներուն քով: Գին 50 Մէնթ միայն: Կարելի է ստանալ նաև Հայկական դեղարանէն — Ի թիւ 472 Յրդ Ալիւի, Նիւ Եորք:

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ

Ֆ. ԶԱՆՈՒՄ ԵՒ ՈՐԴԻԲ

Ն Ե Ր Ա Մ ՈՂ Թ Ի Բ Ա Կ Ա Ն Ա Պ Ա Ն Ա Յ

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ Հայ Հասարակութեան թէ վերոյիշեալ խանութի մէջ կը վաճառենք Շամու, Մըսըրի և Թուրքիոյ ամեն տեսակ ապրանքներ, զօրօրինակ պուլ-զուր, ծեծած, լոխում, հալվա, խահ-վէի տէյրման և ճէզվէ, ներկիլէ, թէմպէթի, Հայոց ազգային հիւսն-գանոցի սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ նպարներ ու անուշեղէններ որ չենք կրնար բոլորն ալ յիշել հոս: Նաև ունինք ամեն տեսակ պահարկ-ղէններ:

Սխտ ատան գիներ: Փորձեցէք:

ԶԱՆՈՒՄ ԵՒ ՈՐԴԻԲ
73, Ուաշինկթօն Փողոց.

ՃԻԼԻԼԸԱ ԶԷՅՆ
ՎԱՃԱՌԱԿԱՆ

Միախոտի, առաջնակարգ սիկարի և Սիկարէթներու

Թիւ 592 Յրդ Ալիւի

Յիշեցէք ՏԻԳՐԻՍԸ երբ գնէք

ԱԶԴ

«Կեր ինչ որ կը սիրես, բայց հազիր ինչ որ ուրիշները կը սիրեն»: Կոկիկ ու մաքուր հագուստները մարդու ճաշակը կը ցուցնեն: Մեծածախ հագուստները չեն միայն պայման մարդու ճաշակը բացատրելու համար. ձեռք, գոյնը և մաքրութիւնը մեծ դեր կը խաղան ատոր մէջ:

Գարնան համար մեր ստացած տեղական և Եւրոպական նոր ապրանքներն անկարելի է գնի մասին մըրջման ենթարկել ուրիշներու հետ: Մեր երկար փորձառութիւնն ու արհեստին մէջ ունեցած հմտութիւնն ապրանքներու տեսակին հետ միացած կ'երաշխաւորեն այնպիսի հագուստներ, որք չեն կրնար գերազանցել:

Փորձ մը բաւական է զբեզ համոզելու համար:

Հայ յաճախորդներէն եղած շահու հարկերին տար պիտի յատկանայ Բարեգործական Ընկերութեան:

Ուրիշներու երթալէ առաջ շահուր է նախ դիմել:

Առ

Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,

Ա. Ռ. Ա. Ղ. Ա. Կ. Ա. Բ. Գ. Դ. Ե. Բ. Զ. Ա. Կ.

Թիւ 628 Յրդ Ալիւի, Նիւ Եորք:

ՏԵՂԱԿԱՆ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ

Ընտիր կերպանեղէններէ վայելուչ հագուստներ կը շինէ գերամատչելի գիներով:



Յ. Ա. Կ. Ռ. Ա. Կ. Ա. Բ. Գ. Դ. Ե. Բ. Զ. Ա. Կ.

(Ներկայացուցիչ)

ՈՒՆԻՎԵՐՍԻ Գ. ԲԷՕՂԸՐ ԵՒ ԵՂԱՍԵՐ

Վ. Ա. Ճ. Ա. Ռ. Ա. Կ. Ա. Բ. Գ. Դ. Ե. Բ. Զ. Ա. Կ.

Գինի, Օղիի, ողելից Ըմպլիւսայ ևն. Թիւ 202, 204 Իսթ 29րդ Փողոց, Նիւ Եորք, Ն. Ե.

Պատիւ ունի ծանուցանել արգոյ Հասարակութեան թէ իւր վաճառած ըմպլիւսայն ոչ միայն փորձնալ և անխաղախ են, այլ և դիւրամատչելի են ամէն գաղափարի անձանց:

Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, քեղական, Բալկան-Փորնիսի և տաճկական ամէն տեսակ ուրբի, օղի, գինի, շամբանիս, մատթիթայ, գարնջուր, պրանտի, ախոսիթ և այլն, իրենց ամեն տեսակներովն: Փափաքողաց գնելու ցուցակը կը զրկուի առանց ո՛ր և է ծախքի:

Յանձնարարութիւնը կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ եւ փութով: Բաղաքին մէջ ապրանքներն ձրի կը զրկուին, իսկ քաղաքէ դուրս զրկուածներուն ծախքը գնողներուն վրայ է:

Ըմպլիւսայն կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գնեցով: (Հօլմէյլ անտրիթիցի)

Մեր յաճախորդքը երբ չի հաւնին իրենց գնած ըմպլիւսայնուն, յանձն կատենք զայնս փոխել, եթէ պակասած ու քստուած չլայն:

Ըմպլիւսայն կը վաճառուին շիշով, կայրնով, տակառով և յատուկ անուակներով որք կը պարունակին 12 կամ 24 իւնթ:

Գինի և Օղիի Հասցէին Խամ

Յ. Մ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ,
535 ՈՒՆԻՎԵՐՍԻ Գ. Բ. Զ. Ա. Կ. Բ. Գ. Դ. Ե. Բ. Զ. Ա. Կ.